

ՍԵՌԱԿԱՆ
ՈՏՆԶԳՈՒԹՅՈՒՆԸ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ





Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա
Coalition to stop violence against women

Այս հրապարակումը պատրաստվել է «Կանանց դեմ բռնության վերացման ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամի» ֆինանսավորմամբ, սակայն արտահայտված տեսակետները և ներառված բովանդակությունը չեն ենթադրում ՄԱԿ-ի կողմից պաշտոնական հաստատում կամ ընդունում:



Մեռական Բռնության
ճգնաժամային
Կենտրոն

«Մեռական ոտնձգությունը ուսումնական հաստատություններում»
հետազոտությունն իրականացվել է «Մեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ի կողմից Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի «Կանանց դեմ բռնության վերացման ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամ»-ի ծրագրի շրջանակներում:

Հետազոտող՝ Զարուհի Ազնաուրյան

Խմբագրող՝ Ազնիվ Նասրյան

Երևան 2023

Սեռական ոտնձգության երևույթը ուսումնական հաստատություններում քիչ ուսումնասիրված և չբարձրաձայնվող թեմա է: Այն ուժի դրսևորման ձև է, որի մասին չհոսելու պատճառներից է դրան ենթարկված անձի՝ դեպքը թաքցնելու, խարանումից (ստիգմատիզացիայից) խուսափելու միտումը: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնն» իրականացրել է հետազոտություն, որի նպատակն էր ուսումնասիրել երիտասարդների (16-36 տարիքային խմբի) շրջանում սեռական ոտնձգության տարածվածությունը, այդ երևույթի վերաբերյալ իրազեկվածության աստիճանն ու դրա նկատմամբ վերաբերմունքը ուսումնական հաստատություններում: Հետազոտությունն իրականացվել է քանակական առցանց հարցման միջոցով՝ կիրառելով ստանդարտացված հարցաթերթի ինքնալրացման տարբերակը: Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել է **454 անձ (432 իգական, 22 արական սեռի)**:

Հիմնվելով հարցման արդյունքների վրա՝ կարելի է պնդել, որ երիտասարդները գիտեն, թե ինչ է սեռական բռնությունը, ինչ դրսևորումներ ունի, որոնցից հարցվածների շրջանում ամենաճանաչվածները «բռնաբարությունը», «սեռական ոտնձգությունը» և «սեռական բռնության հարմարությունը» են: Միևնույն ժամանակ հարցվածների գերակշռող մասը կարծում է, որ սեռական բռնությունը Հայաստանում տարածված երևույթ է, որին ավելի հաճախ ենթարկվում են կանայք և աղջիկ երեխաները:

Սեռական բռնությունը, ըստ հարցվածների, առավել հաճախ պատահում է ուսումնական հաստատություններում և աշխատավայրերում որպես առանձին կատեգորիաներ, բայց ընդհանուր առմամբ այն կարող է տեղի ունենալ ցանկացած վայրում:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդներն այս կամ այն չափով տեղյակ են, թե ուր պետք է դիմի սեռական բռնության ենթարկված անձը՝ նշելով համապատասխան խնդրով զբաղվող թե՛ հասարակական, թե՛ պետական կառույցները, ինչպես նաև հատուկ հավելվածները, օրինակ՝ Safe YOU հավելվածը¹: Տեղեկացվածության տեսանկյունից հատկանշական է նաև, որ երիտասարդները կարողացել են նշել գործողություններ, որոնք պարտադիր և ցանկալի է կիրառել սեռական բռնության ենթարկվելու դեպքում, և գործողություններ, որոնք կատեգորիկ չի կարելի անել:

Համաձայն ստացված պատասխանների՝ սեռական ոտնձգությունների դեպքեր արձանագրվում են ուսումնական հաստատություններում, այդ թվում՝ դպրոցում: Հատկանշական է, որ դպրոցներում բռնության/ոտնձգության դրսևորումներն ավելի շատ համադասարանցիների կողմից են, մինչդեռ համալսարաններում՝ դասախոսական կազմի կողմից: Ուսումնական հաստատություններում դեպքերի գրանցմանը զուգահեռ հարցման արդյունքները ցույց են տալիս, որ չկան դրանց արձագանքման մեխանիզմներ և ընթացակարգեր կամ եթե կան, դրանց վերաբերյալ ուսումնառուները տեղեկացված չեն: Դրա մասին են վկայում սեռական ոտնձգության կամ բռնության դեպքերի մասին չհայտնելու պատճառները, որոնք հիմնականում կարծրատիպային են և արտահայտվում են անցանկալի հետևանքներից և պիտակավորումից խուսափելու, միևնույն ժամանակ դեպքի մասին հայտնելու մեխանիզմներից անտեղյակ լինելու հանգամանքներով:

Հարցման արդյունքները բացահայտել են նաև, որ ուսումնական հաստատություններում բռնության ենթարկված անձանց պատշաճ աջակցություն չի ցուցաբերվում, քանի որ մեծ տոկոս են կազմել դրա վերաբերյալ մասին հաղորդումները: Պատճառների շարքում եղել են անհետևողականությունն ու հաղորդակցման ոչ պատշաճ

¹Safe YOU

մակարդակը, ինչպես նաև տուժողին չհավատալը կամ մեղադրելը, կամ ստացված արձագանքը համապատասխան չի եղել, կամ էլ ընդհանրապես ոչ մի գործողություն չի իրականացվել:

Նման հարցերը կարգավորելու առումով առաջարկված մոտեցումը ներկայացնում էր հիերարխիկ սխեմա, որում նկարագրվում էր տարբեր օղակների ներգրավումը՝ սկսած անմիջական փոխհարաբերությունները կարգավորող մարմնից մինչև ավելի բարձր մակարդակներում ներգրավված անձանց ու կառույցների միջամտությունը: Միևնույն ժամանակ իրենց ուսումնական հաստատություններում նման դեպքերի կանխարգելման ուղղությամբ ցանկալի գործողությունների շարքում նշվել են լայնածավալ իրազեկման, անվտանգության ապահովման, ըստ օրենքի պատժամիջոցների կիրառման, ինչպես նաև ոտնձգությունների մասին բարձրաձայնելու և հետևողական լինելու կարևորությունը: Հարկ է նշել, որ հետազոտությունը բացահայտել է իրազեկման միջոցառումների հազվադեպության և դրանց խիստ անհրաժեշտության միջև ուղիղ համեմատական կապ:

Այսպիսով՝ հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ սեռական ոտնձգության երևույթը ուսումնական հաստատություններում առկա է և չունի պատշաճ կանխարգելման և արձագանքման մեխանիզմներ, ինչի հետևանքով խնդիրը մնում է չբարձրաձայնված, և մեծանում է կրկնվելու հավանականությունը:

Սեռական ոտնձգությունը գենդերային խտրականության դրսևորումների տեսակ է՝ խոսքային կամ ֆիզիկական դրսևորում ունեցող սեռական բնույթի գործողություններ կամ ցանկացած իրավիճակ, որոնք ուղղված են անձի արժանապատվությունը նվաստացնելուն, վախեցնելուն, թշնամությանը, ստորացմանը կամ նմանատիպ իրավիճակներին²: Սեռական ոտնձգության ենթարկված անձինք հաճախ հրաժարվում են դրա մասին բարձրաձայնելուց կամ քրեական գործ հարուցելուց, ուստի առկա վիճակագրական տվյալները հազիվ թե կարողանան պատկերացում տալ խնդրի իրական ծավալների մասին: Առկա տվյալները սակավ են և թերի: Սեռական ոտնձգության երևույթը ուսումնական հաստատություններում առավել ևս չունի ճշգրիտ վիճակագրություն և դեպքերի վարման ընթացակարգեր: Թեպետ ըստ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ սեռական ոտնձգությունը՝ որպես գենդերային խտրականության ձև, արգելված է, վերջին տարիներին սեռական բռնության դեպքերի մասին բարձրաձայնումն առավել նկատելի է³:

Գրականության մեջ միջազգային փորձագետները սեռական ոտնձգությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում ներկայացնում են որպես ուժի դրսևորման մեխանիզմ⁴, ինչը համապատասխան կանխարգելիչ և պատժիչ քաղաքականությունների և ընթացակարգերի բացակայության պարագայում չի ստանում պատշաճ արձագանք: Միևնույն ժամանակ սեռական ոտնձգության ենթարկված անձը փորձում է ամեն կերպ թաքցնել իր հետ կատարվածը, քանի որ հասարակական ճնշման և կարծրատիպային մտածելակերպի գերակշռման հետևանքով իրեն մեղավոր է համարում կատարվածում և օգնության դիմելու փոխարեն ինքնախարազանման և ինքնապատժման փուլերն է հաղթահարում: Սեռական ոտնձգությունները պակաս տեսանելի, բայց այնուամենայնիվ առկա են նաև հանրակրթական հաստատություններում, որտեղ ճիշտ արձագանք և լուծում չստանալու պարագայում ոտնձգության ենթարկվածի մեջ առաջացնում են տրավմայի երկարաձգում ու պրոյեկտում այն ավելի մեծ տարիքի վրա և տեղափոխում նույն իրավիճակն արդեն բարձրագույն ուսումնական հաստատություն:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծով սահմանվում է բուհի և գիտական կազմակերպության աշխատողի պարտավորությունը՝ պահպանել բուհի կամ գիտական կազմակերպության սահմանած էթիկայի կանոնները և ակադեմիական բարեկարգության կանոնակարգի պահանջները (հոդված 36, մաս 17, կետ 3):

Բուհի կանոնադրությամբ սահմանվում է համալսարանական անդամների՝ բուհի ներքին իրավական ակտերի պահանջները կատարելու պարտավորությունը: Սակայն միևնույն ժամանակ այս իրավական պահանջների հետևողականությունը չի ամրագրվում որևէ գործող ընթացակարգով կամ քաղաքականությամբ:

²ԱՀԿ-ի սահմանում, վերցված է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքից, arlis.am/DocumentView.aspx?DocID=83841:

³ՀՀ բուհերում սեռական ոտնձգության կանխարգելման կարգի նպատակը և ընդունման ներպետական իրավական հիմքը, ՄԲԾԿ, 2023:

⁴Teachers' Perceptions of and Responses to Sexual Gender-based Violence, վերցված է EJ1233679.pdf (ed.gov).

Ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության օրինակներ

գնահատականի, լավ վերաբերմունքի կամ օգնության դիմաց սեռական հարաբերության ակնարկը կամ պարտադրումը

«ոչ»-ը որպես պատասխան չընդունելը անցանկալի գրկախառնություններ պահանջելը

անհարկի ֆիզիկական շփումը՝ ներառյալ անցանկալի հպումը

կոպիտ կամ վիրավորական արտահայտություններ օգտագործելը կամ մեկնաբանություններ անելը մարդկանց սեռին հատուկ նվաստացումները

պռնոգրաֆիայի, սեքսուալ նկարների կամ մուլտֆիլմերի, բացահայտ սեքսուալ գրաֆիտիների կամ այլ սեքսուալ պատկերների հրապարակումը կամ տարածումը (ներառյալ առցանց) սեռական կատակներ անելը

սեռական կարողությամբ պարծենալը սեռով պայմանավորված բուլինգը

սեռական բնույթի լուրերի կամ բամբասանքների տարածումը (ներառյալ առցանց)

Պայմանավորված հասարակական մոտեցումներով և դիրքորոշումներով՝ հաճախ ուսումնական հաստատությունում սեռական ոտնձգության ենթարկված անձինք չեն հայտնում դեպքի մասին՝ մտածելով, որ ամոթ է, իրենց սխալ կհասկանան, կմեղադրեն, այն պատշաճ արձագանքի չի արժանանա և կմոռացվի, ոտնձգություն կատարողի կողմից վրեժի վախից, ինչպես նաև իշխանական հարաբերությունների առկայության հանգամանքից բխող հետևանքներից, երբ ոտնձգություն իրականացնողը հիերարխիկ առավելություն ունի ոտնձգության ենթարկվածի նկատմամբ և այլն: Այս ամենը պատճառներ են, որոնք լռեցնում են դեպքերը և նորերի համար պարարտ հող նախապատրաստում: Արտասահմանյան փորձը⁵ ցույց է տալիս, որ ուսումնական հաստատություններում նման դեպքերի թվի նվազեցման համար անհրաժեշտ են հստակ ընթացակարգեր ու գործողություններ, որոնք թույլ կտան ոչ միայն կանխարգելել դրանք, այլև հետևողական լինել դրանց նկատմամբ՝ ուսումնական հաստատության անդամներին տալով ապահովության ու պաշտպանվածության զգացողություն:

⁵Sexual harassment in education (brochure), Ontario Human Rights Commission Brochure, վերցված է <https://www.ohrc.on.ca/en/sexual-harassment-education-brochure>.

Սեռական ոտնձգությունների կանխարգելման և արձագանքման ցուցիչներն են՝

ոտնձգությունների դեմ պայքարի ժամանակ
գործող ընթացակարգերը
հաստատության կողմից բողոքին
արձագանքելու արագությունը
հաստատության կողմից բողոքին
վերաբերվելու լրջությունը
բողոքին արձագանքելուն տրամադրված
ռեսուրսները
հաստատության կողմից բողոքող անձի
համար առողջ մթնոլորտի ապահովումը
հաստատության կողմից բողոքող անձին
իրականացված գործողությունների մասին
տեղեկացնելու որակը

«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» հասարակական կազմակերպությունը 2023 թվականին մշակել և ներկայացրել է ՀՀ բուհերում սեռական ոտնձգության կանխարգելման կարգ, որի նպատակն է ստեղծել ՀՀ բուհերում սեռական ոտնձգության կանխարգելմանն ուղղված ներքին կանոններ: Սույն կարգի գործառնության պարագայում մեծանում է սեռական ոտնձգությունների կանխարգելման և նվազեցման հավանականությունը:

Այնուամենայնիվ, այսօր հետազոտված չեն ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության վերաբերյալ ուսումնառողների պատկերացումները և նման դեպքերի առկայության պարագայում համապատասխան արձագանքման մեխանիզմներն ու ընթացակարգերը: Հիմնվելով վերոնշյալի վրա և ենթադրելով, որ ուսումնական հաստատությունում սեռական ոտնձգության երևույթի վերաբերյալ սակավ տեղեկությունները բխում են տեղեկացվածության ցածր մակարդակից՝ «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը» 2023 թվականի հունիսին երիտասարդների շրջանում անցկացրել է «Սեռական ոտնձգությունների երևույթն ուսումնական հաստատություններում» թեմայով հետազոտություն:

ՄԵԹՈԴՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակ

Հետազոտությունն իրականացվել է 16-36 տարեկան անձանց շրջանում և նպատակ ուներ ուսումնասիրելու երիտասարդների միջավայրում սեռական ոտնձգության տարածվածությունը, այդ երևույթի վերաբերյալ իրազեկվածության աստիճանն ու դրա նկատմամբ վերաբերմունքը ուսումնական հաստատություններում: Միևնույն ժամանակ հետազոտության հիմնախնդիրներից էր բացահայտել, թե ինչ ընթացակարգերով և ում կարող է դիմել ուսումնառուն ուսումնական հաստատությունում սեռական ոտնձգության կամ բռնության ենթարկվելու պարագայում: Հետազոտության արդյունքում հնարավոր է հիմնավորել ՀՀ բուհերում սեռական ոտնձգությունների կանխարգելմանն ուղղված ընթացակարգերի և կանոնակարգերի հաստատման ու հետևողական կիրառման անհրաժեշտությունը:

Մեթոդ և ընտրանք

Ելնելով հետազոտության նպատակից ու հիմնախնդրից՝ իրականացվել է քանակական առցանց հարցում, ինչը հնարավորություն է տվել ունենալու արձագանքման բարձր մակարդակ: Հետազոտության համար կիրառվել է կիսաստանդարտացված հարցաթերթ, որը բաղկացած է եղել հիմնականում ստանդարտացված փակ հարցերից՝ աստիճանական ենթահարցերով, որոշ դեպքերում՝ փակ հարցի համար պարզաբանում ենթադրող բաց հարցերով: Ընդհանուր առմամբ հարցաթերթը ներառել է 25 հարց: Կիրառվել է հարցաթերթի ինքնալրացման տարբերակը, երբ հարցվողները հարցաշարի լրացրել են համապատասխան հղման միջոցով:

Հաշվի առնելով հետազոտության առանձնահատկությունները՝ հարցվողների տարիքային շեմը սահմանվել է 16-36 տարեկանը՝ պատահական ընտրանքի միջոցով: Նշված տարիքային խմբի մասնակցությունն ամբողջական ապահովելու նպատակով սահմանված համախմբությունից դուրս ներկայացուցիչները հնարավորություն չեն ունեցել լրացնելու հարցաթերթը: Արդյունքում հարցմանը մասնակցել է **454 անձ**, որոնցից **432-ը՝ իգական, 22-ը՝ արական** սեռի: Ստորև ներկայացված է հարցվողների ժողովրդագրական բնութագիրը:

Հարցվածների ժողովրդագրական բնութագիրը

Ստորև ներկայացված աղյուսակները պատկերում են հարցվածների ժողովրդագրական պատկերն *ըստ սեռի, տարիքի, աշխարհագրական տեղանքի, ուսումնառության հանգամանքի* և *ուսումնական հաստատության*:

Աղյուսակ 1. Հարցվողների բաշխումն ըստ տարիքի և սեռի

Տարիքային խումբ	Սեռ		Ը ն դ ա մ ե ն ը
	Իգական	Արական	
16-18	73	6	79
19-24	213	3	216
25-30	99	10	109
31-36	47	3	50
Ը ն դ ա մ ե ն ը	432	22	454

Աղյուսակ 2. Հարցվողների բաշխումն ըստ մարզի և սեռի

Տարիքային խումբ	Սեռ		Ը ն դ ա մ ե ն ը
	Իգական	Արական	
Արագածոտն	14	1	15
Արարատ	38	3	41
Արմավիր	24	1	25
Գեղարքունիք	20	2	22
Երևան	226	8	234
Լոռի	24	2	26
Կոտայք	41	3	44
Շիրակ	23	1	24
Սյունիք	5	0	5
Վայոց ձոր	4	0	4
Տավուշ	13	1	14
Ը ն դ ա մ ե ն ը	432	22	454

Աղյուսակ 3. Հարցվողների բաշխումն ըստ ուսումնական հաստատության և սեռի

Ուսումնական հաստատություն	Սեռ		Ը ն դ ա մ ե ն ը
	Իգական	Արական	
Երևանի պետական համալսարան	107	4	111
ԻՍ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան	48	1	49
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան	27	0	27
Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան	24	2	27
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	23	0	23
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան	15	0	15
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան	12	1	13
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան	12	1	13
Հայաստանի ամերիկյան համալսարան	11	1	12
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	9	1	10
Հայ-ռուսական (պլավոնական) համալսարան	8	1	9
Հայաստանում ֆրանսիական համալսարան	8	1	9
Հայաստանի ազգային ագրարային համալսարան	6	0	6
Հայաստանի եվրոպական համալսարան	4	0	4
Այլ	68	6	73
Դպրոցական	26	2	28
Չունեն բարձրագույն կրթություն	24	1	25
Ը ն դ ա մ ե ն ը	432	22	454

Աղյուսակ 4. Հարցվողների բաշխումն ըստ ուսումնաստության, տարիքի և սեռի

Ուսումնաստություն (հարցման պահին)	16-18		19-24		25-30		31-36		Ը ն դ ա մ ե ն ը
	Իգ	Ար	Իգ	Ար	Իգ	Ար	Իգ	Ար	
Դպրոցում	33	3	0	0	0	0	0	0	36
Համալսարանում	17	2	148	3	9	8	3	0	190
Քոլեջում	19	1	8	0	0	0	0	0	28
Ոչ	4	0	57	0	90	2	44	3	200
Ը ն դ ա մ ե ն ը	73	6	213	3	99	10	47	3	454

Ինչպես երևում է աղյուսակներից, հարցվածների մեծ մասը իգական սեռի ներկայացուցիչներ են և ներկայացնում են 19-30 տարիքային միջակայքը՝ 19-24 տարեկանների գերակշռմամբ: Հարցվածների աշխարհագրական առավելագույն ներկայացվածությունը Երևան քաղաքից է, ապա՝ Արարատի, Արմավիրի և Շիրակի մարզերից: Հարցման մասնակիցների 44%-ը հարցման պահին բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներ են, մյուս 41%-ը ներկայում չի ուսանում, իսկ 15%-ը դպրոցական է կամ քոլեջի ուսանող: Համալսարաններից ընտրանքի մեջ առավել մեծ ներկայացուցչականության բաժին է հասել Երևանի պետական համալսարանին՝ հարցվածների մոտ մեկ քառորդը (24%), իսկ մյուս մասը մոտավոր հավասարությամբ կիսում են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (11%), Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանը (6%), Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը (6%) և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (5%):

Հաշվի առնելով, որ ըստ «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» 2008-2018 թվականներին դիմած դեպքերի՝ ՀՀ-ում սեռական ոտնձգության բացահայտված դեպքերի ճնշող մեծամասնությունը իգական սեռի ներկայացուցիչների նկատմամբ է տեղի ունենում⁶, հետազոտության վերջնական ընտրանքն այս կոնկրետ հետազոտական խնդրի համար դիտարկվում է որպես ներկայացուցչական:

⁶ՀՀ-ում սեռական բռնության իրավիճակի վերլուծություն. Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի տասնամյա գործունեության ամփոփում, էջ 60:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Սեռական բռնության վերաբերյալ տեղեկացվածություն

«Սեռական բռնությունը» սահմանվում է որպես ցանկացած սեռական ակտ կամ դրա փորձ, անցանկալի սեռական մեկնաբանություն կամ առաջարկություն, որն ուղղված է անձի սեռականությանը՝ օգտագործելով հարկադրանք կամ սպառնալիք: Սեռական բռնության սահմանման մաս են նաև «համաձայնություն» եզրույթի կարևորումը և ընդգծումը⁷:

Սեռական բռնությունը հասարակական առողջության լուրջ խնդիր է և ունի կարճաժամկետ կամ երկարաժամկետ խոր հետևանքներ ֆիզիկական և հոգեկան առողջության համար, ինչպիսիք են սեռական և վերարտադրողական առողջության խնդիրները⁸, ինքնասպանությունների կամ ՄԻԱՎ վարակի ռիսկերը: Սեռական հարձակման ժամանակ կամ հետագայում որպես վրեժխնդրություն սպանությունը նույնպես սեռական բռնության գործոն է:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ հետազոտության խնդիրներից մեկը եղել է բացահայտել հայաստանյան երիտասարդության շրջանում սեռական բռնության վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը: Ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները, **բոլոր հարցվածները՝** բացառությամբ մեկ տղայի, նշել են, որ **լսել են «սեռական բռնություն» տերմինը:** Պարզելու համար, թե սեռական բռնության դրսևորումներից որոնք են ծանոթ, և որոնք են առավել հաճախ գուցորդվում սեռական բռնության երևույթի հետ, հարցվողներին առաջարկվել էր հետևյալ տարբերակներից ընտրել մի քանիսը՝


- սեռական ոտնձգություն,
- սեռական բնույթի հպումներ,
- բռնաբարություն,
- սեռական բնույթի կատակներ,
- սեռական բնույթի հաճոյախոսություններ,
- վերոնշյալ բոլոր տարբերակները և
- առաջարկել սեփական տարբերակը:

Համաձայն հարցման արդյունքների՝ սեռական բռնության դրսևորումներն առանձնացնելիս առանձին պատասխանների գերակա մասը բաժին է հասել **բռնաբարություն (նշվել է 171 անգամ), սեռական ոտնձգություն, (նշվել է 166 անգամ) և սեռական բնույթի հպումներ (նշվել է 155 անգամ)** տարբերակներին: Այսպիսով, «սեռական բռնություն» ասելով, երիտասարդներն առավել հաճախ հասկանում են **բռնաբարություն:** Այնուամենայնիվ, ամենատարածված պատասխանը հարցվողների շրջանում **վերոնշյալ բոլոր պատասխանները** տարբերակն էր **(նշվել է 368 անգամ)**, ինչը ներառում է բռնության դրսևորման բոլոր թվարկված ձևերը: Ինչ վերաբերում է երևույթի տարածվածությանը, ապա հարցվածների գերակշռող մասը **(88%)** նշել է, որ **կարծում է, որ սեռական բռնությունը տարածված երևույթ է Հայաստանում, իսկ 12%-ը չի համաձայնել այս պնդմանը:** Ըստ այս պատկերի՝ հարցված երիտասարդների ճնշող մեծամասնությունը կարծում է, որ սեռական բռնության երևույթը մեծ տարածում ունի հայ հասարակությունում:

⁷«Տեսակներ - SACC»: www.saccarmenia.org, վերցված է 26-07-2023:
⁸Holmes M. M., Resnick H. S., Kilpatrick D. G., Best C. L. (1996-08):
«Rape-related pregnancy: estimates and descriptive characteristics from a national sample of women».

Ի՞նչ եք կարծում, սեռական բռնությունը մեր հասարակության մեջ տարածվա՞ծ երևույթ է

n = 454



Գծապատկեր 1. Սեռական բռնության տարածվածությունը ՀՀ-ում



Սեռական բռնության ենթարկված անձ


Ինչպես ցույց է տալիս փորձը, թեպետ կանայք և աղջիկներն ավելի շատ են ենթարկվում սեռական բռնության, այն կարող է տեղի ունենալ ցանկացած անձի հետ ցանկացած տարիքում⁹: Դա բռնության ակտ է, որը կարող է կատարվել ծնողների, խնամակալների, ծանոթների և անծանոթների, ինչպես նաև մտերիմ գործընկերների կողմից: Այն ավելի շատ ագրեսիվ գործողություն է, որի նպատակը հաճախ ոտնձգության ենթարկված անձի հանդեպ իշխանություն և գերիշխանություն արտահայտելն է:

Սեռական բռնության ենթարկված անձի սեռատարիքային համընդհանուր բնութագրի վերոնշյալ հանգամանքն ապացուցում են նաև հարցման արդյունքները, քանզի երիտասարդները, քանզի երիտասարդները, պատասխանելով այն հարցին, թե, իրենց կարծիքով, ովքեր են ավելի հաճախ ենթարկվում բռնության, տվել են բավական կանխատեսելի և վերոնշյալ փաստարկին լիովին համահունչ պատասխան: Այսպիսով՝ ամենից հաճախ նշված պատասխաններն այս հարցին եղել են **կանայք (նշվել է 377 անգամ)** և **աղջիկ երեխաները (նշվել է 347 անգամ)**: Ըստ պատասխանների տարածվածության՝ հաջորդ հորիզոնականում էին **տղա երեխաները (նշվել է 124 անգամ)**: Հետաքրքրական է, որ **տղամարդիկ** որպես հաճախակի սեռական բռնության ենթարկված անձ նշվել են միայն 11 անգամ, մինչդեռ **բոլորի նկատմամբ հավասար** պատասխանը **նշվել է 52 անգամ**: Այնուամենայնիվ, հարցման արդյունքները փաստում են, որ հասարակական գիտակցության և ընկալման մակարդակում սեռական բռնություն ավելի հաճախ տեղի է ունենում կանանց և աղջիկ երեխաների նկատմամբ:

Ինչպես ցույց են տալիս դեպքերը և ուսումնասիրությունները, սեռական ոտնձգությունն ու բռնությունը չունեն իրականացման համար որևէ հստակ վայր կամ պայման, որը կարելի է մատնանշել որպես ամենառիսկային միջավայր ոտնձգության կամ բռնության համար: Իրականում այս երևույթը կարելի է հանդիպել ցանկացած վայրում, լինի փողոց, տուն, ուսումնական կամ բժշկական հաստատություն, աշխատավայր, հանրային տրանսպորտ կամ հանրային որևէ այլ վայր: Այս փաստի հավաստումն են նաև հարցվածների պատասխաններն այն հարցին, թե **որտեղ կարող է տեղի ունենալ սեռական բռնություն**, որին տրված ամենատարածված պատասխանը եղել է **բոլոր հիշատակված վայրերը** տարբերակը **(նշվել է 347 անգամ)**: Ըստ առանձին վայրերի, թե որտեղ ավելի հաճախ կարող է տեղի ունենալ սեռական բռնություն, տարածվածության հաճախականությամբ նշվել են հետևյալները՝

⁹ՀՀ-ում սեռական բռնության իրավիճակի վերլուծություն. Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի տասնամյա գործունեության ամփոփում, էջ 7:

Գծապատկեր 2. Որտե՞ղ կարող է տեղի ունենալ սեռական ոտնձգություն




Սեռական բռնության կիրառման ավելի քիչ հանդիպող վայրերի շարքում հարցվողները նշել են **մեքենան, սրճարանը, ռեստորանը, բարը, փարը և անգամ եկեղեցին**: Ինչպես երևում է պատասխաններից, հարցվողների կարծիքով սեռական բռնություն ավելի հաճախ տեղի է ունենում ուսումնական հաստատություններում, ինչը վկայում է նրա մասին, որ ուսումնական հաստատություններում բացակայում են սեռական ոտնձգության կանխարգելման և արձագանքման մեխանիզմներ, որոնք կգսպեն դեպքերի տարածվածությունը և կապահովեն այնտեղ սովորող և աշխատող անձնակազմների անվտանգությունը:

Իրազեկվածություն

Սեռական ոտնձգությունների կանխարգելման միջոցներից մեկը տեղեկացվածության բարձրացումն է, ինչը ենթադրում է, որ անձը կարողանում է տարանջատել ոտնձգության դրսևորման ձևերը և տեղյակ է, թե ինչ պետք է անի և ուր պետք է դիմի սեռական ոտնձգության կամ բռնության ենթարկվելու դեպքում: Այսպիսով հարցվածների **36%** նշել է, որ **միանշանակ գիտի**, թե ուր պետք է դիմի սեռական բռնության ենթարկված անձը, մյուս **44%-ը** նշել է, որ **մոտավոր գիտի**, իսկ **20%-ը** նշել է, որ **տեղյակ չէ**, թե ուր կարող է կամ պետք է դիմի սեռական բռնության ենթարկվածը:

Գիտե՞ք արդյոք՝ ուր կարող է դիմել սեռական բռնության ենթարկված անձը
n = 454



Գծապատկեր 3. Աջակցման միջոցների մասին տեղեկացվածությունը երիտասարդության շրջանում

- Այո
- Ոչ
- Մոտավոր

Հետաքրքրական է, որ **ուստիկանությունը** ամենատարածված պատասխանն էր թե՛ անելիքները հստակ իմացողների, թե՛ մոտավոր իմացողների շրջանում: Երկրորդ հորիզոնականում «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» էր **այո** պատասխանաձևերի շրջանում, իսկ **Safe YOU հավելվածը**¹⁰ մոտավոր տարբերակն ընտրողների շրջանում:

Աղյուսակ 5. Ո՞ւր կարող է դիմել աջակցություն ստանալու համար սեռական բռնության ենթարկված անձը

<p>Գիտե՞ք՝ ուր կարող է դիմել սեռական բռնության ենթարկված անձը</p>	<p>Այո, հստակ</p>	<ul style="list-style-type: none"> - Ոստիկանություն - Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն - Կանանց աջակցման կենտրոն - Կանանց իրավունքների կենտրոն - Ընտանիքի անդամներ/ծնողներ - Մարդու իրավունքների պաշտպան - Բուժհաստատություններ
	<p>Այո, մոտավոր</p>	<ul style="list-style-type: none"> - Ոստիկանություն - Safe YOU հավելված - Կանանց ռեսուրսային կենտրոն - Դատարան - ՀԿ-ներ

Ինչպես երևում է պատկերից, նրանք, ովքեր նշել էին, որ **հստակ գիտեն**, թե ուր պետք է դիմի սեռական բռնության ենթարկված անձը, նշել էին նաև հստակ հասարակական կազմակերպություններ, որոնք զբաղվում են կանանց հիմնախնդիրներով՝ *Կանանց աջակցման կենտրոն*, *Կանանց իրավունքների կենտրոն*: Մինչդեռ **ուժ դիմել** հարցին մոտավոր տեղյակ հարցվողներն ավելի հաճախ նշել են *հասարակական կազմակերպությունը*¹⁰ որպես ընդհանուր կատեգորիա, ինչպես նաև *մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն ու դատարանը*¹⁰ որպես իրավապաշտպան կառույց:

¹⁰Safe YOU

Սեռական բնության ենթարկված անձի գործողությունները

Սեռական ոտնձգության կամ բռնության ենթարկված անձը հաճախ չգիտի, թե ինչ գործողություններ պետք է անի, և ինչ ցանկալի չէ, որ անի, եթե ենթարկվել է ոտնձգության կամ բռնության: Գրականության մեջ ամեն և բռնության ենթարկվածին առաջին 72 ժամերի ընթացքում աջակցման և դեպքի վարման ընթացակարգեր, որոնց պատշաճ պահպանման դեպքում ոչ միայն հնարավոր է լինում գրագետ և ուղղորդված աջակցություն տրամադրել տուժողին, այլև բռնարարին հայտնաբերելու իրական քայլեր ձեռնարկել: Բռնության դեպքից հետո առաջին 72 ժամվա ընթացքում կարևոր գործողություններից են անհրաժեշտության դեպքում բռնարարի ԴՆԹ-ի հետազոտությունը, ՄԻԱՎ-ի դեմ կանխարգելիչ խորհրդատվությունն ու միջամտությունը, հոգեբանական խորհրդատվությունը, բժշկական խորհրդատվությունը և այլն: Այս ամենը ենթադրում է հնարավորինս շուտ օգնության դիմելու կարևորության վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում:

Պարզելու, թե որքանով են ՀՀ-ում երիտասարդները տեղյակ սեռական ոտնձգության կամ բռնության ենթարկված անձանց կողմից կատարվելիք քայլերի անհրաժեշտության ու կարևորության մասին, նրանց տրվել է հարց, թե ինչ կարող է անել սեռական բռնության ենթարկված անձը: Առաջարկված տարբերակներն էին՝

- բռնարարից հեռու ապահով տեղ գտնել,
- մեկուսանալ հասարակությունից,
- զանգահարել մոտ ընկերոջը կամ հարազատին, որին վստահում է,
- ոչ մեկին չպատմել եղածի մասին,
- դիմել բժշկական օգնության,
- ինքնուրույն վերացնել բռնության հետքերը,
- դիմել ոստիկանություն,
- դիմել որևէ կենտրոն, որը կարող է տրամադրել աջակցություն,
- դիմել «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն»,
- ոչ մի բան չանել, որպեսզի ոչ մեկը չիմանա եղածի մասին,
- փորձել մոռանալ տեղի ունեցածը:

Համաձայն տրված պատասխանների՝ սեռական բռնության ենթարկվածն **անպայման** պետք է կատարի հետևյալ գործողությունները՝ դիմի «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն», ոստիկանություն, բժշկական օգնության և որևէ կենտրոն, որը կարող է տրամադրել աջակցություն: **Ըստ ցանկության** առաջին տեղում էր վստահություն վայելող մոտ ընկերոջը կամ հարազատին զանգահարելը, իսկ **ըստ հնարավորության**՝ բռնարարից հեռու ապահով տեղ գտնելը: Միևնույն ժամանակ հարցվողների մեծամասնության կողմից կատեգորիկ «ոչ»-ի էին արժանացել «ոչ մի բան չանել, որպեսզի ոչ մեկը չիմանա եղածի մասին», «ինքնուրույն վերացնել բռնության հետքերը», «մեկուսանալ հասարակությունից», «ոչ մեկին չպատմել եղածի մասին» և «փորձել մոռանալ տեղի ունեցածը» տարբերակները: Մանրամասները ստորև ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 6. Սեռական բռնության ենթարկված անձի գործողությունները

	Այո, անպայման	Այո, եթե ցանկանա	Այո, եթե հնարավոր է	Ոչ	Ընդամենը
Բռնարարից հեռու ապահով տեղ գտնել	192	57	172	33	454
Մեկուսանալ հասարակությունից	10	67	7	370	454
Չանգահարել մոտ ընկերոջը կամ հարազատին, որին վատանում է	181	174	68	31	454
Ոչ մեկին չպատմել եղածի մասին	16	67	15	356	454
Դիմել բժշկական օգնության	345	59	44	6	454
Ինքնուրույն վերացնել բռնության հետքերը	13	44	21	376	454
Դիմել ոստիկանություն	351	68	29	6	454
Դիմել որևէ կենտրոն, որը կարող է տրամադրել աջակցություն	340	81	27	6	454
Դիմել «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն»	364	60	26	4	454
Ոչ մի բան չանել, որպեսզի ոչ մեկը չիմանա եղածի մասին	11	42	13	388	454
Փորձել մոռանալ տեղի ունեցածը	47	56	85	266	454


Արդյունքները խոսում են նրա մասին, որ առնվազն երիտասարդության մեծ մասի շրջանում տարածված են սեռական բռնության դեպքի արձագանքման աղեկվատ և ճիշտ պատկերացումներ:

Սեռական բռնության դրսևորումները կրթական հաստատություններում

Այն հարցին, թե արդյոք իրենք կամ իրենց ծանոթներից մեկը երբևէ ենթարկվել են սեռական ոտնձգության կամ բռնության ուսումնական հաստատությունում, հարցվածների կեսից ավելին (66%) պատասխանել է **ոչ**, մինչդեռ 19%-ը նշել է, որ **այո, իրենց ծանոթները, 8%-ը** նշել է, որ **հենց իրենք**, իսկ 7%-ը՝ **և՛ իրենք, և՛ իրենց ծանոթները**: Ահազանգոդն այն է, որ **այո** պատասխանողների (454-ից 155-ը) կեսից ավելին (52%) նշել է, որ դեպքը տեղի է ունեցել **դպրոցում (155-ից 81-ը)**, մեկ երրորդից ավելին (36%) նշել է, որ **համալսարանում (155-ից 56-ը)**, իսկ ևս 12%-ը՝ **քոլեջում (155-ից 18-ը)**:

Միևնույն ժամանակ հետաքրքրական է, որ դպրոցում սեռական ոտնձգությունների/բռնությունների գերակշռող մասը տեղի է ունեցել համադասարանցիների, իսկ մեկ քառորդ դեպքերում՝ ուսուցչի կողմից: Մինչդեռ համալսարանում պատկերը հայելային է՝ կեսից ավելին՝ դասախոսների, իսկ շուրջ 10%-ը համակուրսեցիների կողմից է: Այլ պատասխանների մեջ նշվել են *աղմիկիստրատիվ անձնակազմը, պահակը, անձամոթը, մեկ այլ ծնողը*, իսկ որոշ հարցվողներ *դժվարացել* են նշել, թե ով է դա եղել:

Գծապատկեր 6. Սեռական ոտնձգություն/բռնություն կիրառողներն ըստ ուսումնական հաստատության



Այն հարցին, թե տեղի ունեցածի մասին ում հետ են հարցվածները խոսել, ամենատարածված պատասխաններն էին՝ **ընկերներ (նշվել է 88 անգամ), ծնողներ (նշվել է 27 անգամ) և քույր/եղբայր (նշվել է 18 անգամ)**: Հետաքրքրական է, որ ըստ պատասխանների հաճախակիության՝ երկրորդ տեղում էր **ոչ մեկի հետ** պատասխանը, որը **նշվել էր 54 անգամ**: Հարցվածներից 5-ը ընտրել էր **համապատասխան մասնագետ** տարբերակը՝ նշելով, որ դժվարությամբ, բայց խոսել են հոգեբանի հետ:

Սեռական բռնության ոտնձգության մասին հայտնելու մեխանիզմներ


Սեռական բռնության կամ ոտնձգության կանխարգելման լավագույն միջոցը համապատասխան արձագանքման մեխանիզմների ներդրումն է, այդ թվում՝ ուսումնական հաստատություններում: Համաձայն «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ի՝ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ-ի համագործակցությամբ և Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կին իրավապաշտպանները քայլեր են ձեռնարկում Հայաստանում գենդերային բռնության դեմ» ծրագրի շրջանակում մշակված կարգի՝ կարևորվում է փոխադարձաբար իրար վերահսկող և խնդրի անաչառ դիտարկում ապահովող մարմինների՝ սեռական ոտնձգությունների հարցերով խորհրդատուի և ենթահանձնաժողովի առկայությունը բուհերում, ինչպես նաև սեռական ոտնձգության վերաբերյալ բողոք ներկայացնելու և դրա արդյունքում հարուցված վարույթի ընթացակարգի պահպանումը¹¹: Վերոնշյալը ներկայում բացակայում է ՀՀ բարձրագույն կրթական համակարգում, ինչի մասին են վկայում նաև հարցվածների պատասխանները սեռական բռնության/ոտնձգության մասին հայտնելու մեխանիզմներին վերաբերող հարցերին:

Այսպիսով՝ այն հարցին, թե արդյոք հարցվողը կամ իրեն ծանոթ անձինք կարողացել են ուսումնական հաստատությունում տեղի ունեցած սեռական բռնության/ոտնձգության մասին հայտնել ուսումնական հաստատության համապատասխան մարմնին, 155 հարցվածներից ընդամենը **13%-ն** է պատասխանել **այո**, մինչդեռ գերակշռող մասը՝ **58%-ը**, պատասխանել է **ոչ**, մնացած **29%-ը՝ տեղյակ չեն**:

¹¹ ՀՀ բուհերում սեռական ոտնձգության կանխարգելման կարգի նպատակը և ընդունման ներպետական իրավական հիմքը, ՍԲԾԿ, 2023:

**Դուք կամ Ձեր ծանոթը կարողացել էք կատարված սեռական ոտնձգության մասին հայտնել ուսումնական հաստատության համապատասխան մարմնին
n=155**

Գծապատկեր 7. *Ուսումնական հաստատությունում սեռական ոտնձգության մասին հայտնելու հնարավորություն*



Ուսումնական հաստատության համապատասխան մարմնին դեպքի մասին չտեղեկացնելու հիմնական պատճառների մեջ ըստ հաճախության կարելի է առանձնացնել հետևյալ պատասխանները՝

Գծապատկեր 8. *Ուսումնական հաստատությունում տեղի ունեցած դեպքի մասին չտեղեկացնելու պատճառները*

42%	Մտածում էի՝ հայտնելու դեպքում կարող են ոչ ցանկալի հետևանքներ լինել
35%	Խուսափում էի պիտակավորումից
30%	Զգիտեի ում և ինչպես ասել
20%	Մտածում էի՝ չեմ հավատա
13%	Մտածում էի՝ բռնարարը կարող է հետագայում վրեժ լուծել
27%	Դժվարանում եմ պատասխանել
20%	Այլ
Ներկայացված տոկոսներն արտահայտում են տվյալ պատասխանն ընտրած լինելու հաճախականությունը և ոչ թե ընտրողների տոկոսը	

պատճառները հիմնականում կարծրատիպային են և արտահայտում են *անցանկալի հետևանքներից և պիտակավորումից խուսափելու հանգամանքը*: Դեպքի մասին հայտնելու մեխանիզմներից *անտեղյակ լինելը* ևս հաճախ նշված պատասխան է, ինչը խոսում է հենց նրա մասին, որ դրանք կա՛մ բացակայում են, կա՛մ դրանց մասին տեղեկությունը հասանելի չէ ուսումնառուներին: Մյուս կողմից **դժվարանում եմ պատասխանել** տարբերակը ևս հաճախակի ընտրված պատասխան էր, ինչը նույնպես կարելի է կապել տեղեկացվածության ցածր մակարդակի կամ մեխանիզմի բացակայության հետ: Այլ պատասխանների մեջ հաճախ հանդիպող տարբերակ է եղել երևույթը որպես սեռական ոտնձգություն նույնականացնելու անկարողությունն ու անտեղյակությունը (*օրինակ՝ տղամարդ ուսուցչի կողմից անցանկալի հպումները, դասարանցիների կողմից անցանկալի ռեպլիկները*). հատկանշական է, որ այս տարբերակը նշել են այն հարցվողները, որոնց նկատմամբ ոտնձգությունները եղել են դպրոցում՝ մինչև չափահաս դառնալը:

Գծապատկեր 9. Աջակցություն չստանալու հավանական պատճառները

14%	Քացակայել են հետևողականությունն ու հաղորդակցման պատշաճ մակարդակը
12%	Համապատասխան արձագանքի չեն արժանացել
11%	Չեն հավատացել, կամ արժեք չի տրվել դեպքին
11%	Ոչ մի գործողություն չի ձեռնարկվել
8%	Մեղադրել են տուժողին
64%	Տեղյակ չեն/Ղ-ժվարանում են պատասխանել
Ներկայացված տոկոսներն արտահայտում են տվյալ պատասխանն ընտրած լինելու հաճախականությունը և ոչ թե ընտրողների տոկոսը	

Ուսումնական հաստատությունում սեռական ոտնձգության ենթարկված անձանց կեսը նշել է, որ ուսումնական հաստատության պատասխանատուներն իրենց տրամադրել են անհրաժեշտ աջակցություն, մինչդեռ մյուս կեսը նշել է, որ չի ստացել նման օգնություն: Աջակցություն չստանալու հավանական պատճառները նշելիս հարցվողները հնարավորություն ունեին նշելու մի քանի տարբերակ, և Գծապատկեր 9-ում ներկայացված հերթականությունն արտացոլում է տարբերակների ընտրվելու հաճախականությունը:

Այսպիսով՝ ինչպես երևում է Գծապատկեր 9-ից, հարցվողները հիմնականում դժվարացել են սահմանել որևէ պատճառ, որը կարող է լինել սեռական ոտնձգությունների դեպքերին չարձագանքելու հիմք: Այնուամենայնիվ, առաջարկված տարբերակները նշվել են, անգամ եղել են դեպքեր, երբ միաժամանակ բոլոր տարբերակներն էլ ընտրվել են՝ ենթադրաբար նշանակելով, որ այդ բոլոր պատճառները կարող էին թաքնված լինել դեպքի անարձագանք մնալու հետևում: Ինչպես կարելի է տեսնել պատկերից, առավել հաճախ նշված պատճառը եղել է այն, որ քացակայել են հետևողականությունն ու հաղորդակցման պատշաճ մակարդակը, կամ ստացված արձագանքը համապատասխան չի եղել, կամ էլ ընդհանրապես ոչ մի գործողություն չի իրականացվել: Միևնույն ժամանակ մի քանի անգամ նշվել են նաև այն տարբերակները, որ կա՛մ տուժողին չեն հավատացել, կա՛մ նրան մեղադրել են:

Մյուս կողմից՝ հարցվածների ճնշող մեծամասնությունը նշել է, որ չեն մտաբերում այնպիսի դեպքեր, որ իրենք կամ իրենց ծանոթները երբևէ ենթարկված լինեն կարգապահական նկատողության կամ պատժի կրթական հաստատությունում սեռական ոտնձգության/բռնության մասին զեկուցելու կամ բարձրաձայնելու համար: Հարցվածներից ընդամենը 17-ն է նշել, որ նման դեպքեր պատահել են, սակայն չեն մանրամասնել, թե ինչ հանգամանքներում:

Այն հարցին, թե ով պետք է կարգավորի նման հարցերը ուսումնական հաստատությունում, հարցվողների պատասխանները կարելի է նկարագրել հետևյալ կերպ.

- **Եթե ուսումնական հաստատությունում գործում է որևէ հատուկ հանձնախումբ նման հարցերը քննելու համար, որում պարտադիր պետք է ներգրավված լինի հոգեբան, ապա դիմելու առաջնային օղակը պետք է լինի այդ մարմինը/հանձնախումբը, որը հարցին լուծում չտալու դեպքում պետք է դիմի ուսումնական հաստատության ղեկավարությանը (տնօրենություն, ղեկանատ, ռեկտորատ), նրանց կողմից հարցին լուծում չտալու դեպքում էլ գործին պետք է միանան կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ապա՝ իրավապահ մարմինները,**

- **Եթե ուսումնական հաստատությունում նման հանձնախումբ չի գործում, ապա առաջնային օղակը պետք է լինի խմբի անմիջական ղեկավարը (դասղեկ, կուրսղեկ), որը պետք է տեղեկացնի հոգեբանին, միասին լուծում չգտնելու դեպքում կարող են միանալ ուսուցչական կազմը, ապա՝ տնօրենությունը, և հարցին այնուամենայնիվ լուծում չտալու պարագայում կրկին դիմել կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն և իրավապահ մարմիններին:**

Ներկայացված դեպքերում նշվել են նաև ընտանիքն ու ծնողները՝ որպես դեպքերի կարգավորող օղակ, սակայն այս պատասխանների հաճախականությունն այնքան փոքր է, որ դա չի կարող համարվել օրինաչափ: Մյուս կողմից՝ տարածված պատասխաններից է եղել նաև **բոլորը** տարբերակը, ինչը ենթադրում է, որ ոչ միայն վերոնշյալ բոլոր օղակների, այլև ընդհանուր առմամբ հասարակության ներգրավումն անհրաժեշտ են այս հարցերի կարգավորման համար:

Ստորև ներկայացված աղյուսակում արտացոլված են հարցվածների պատկերացմամբ այս հարցերը կարգավորելու համար պատասխանատու օղակները՝ ըստ պատասխանների հաճախականության:


Աղյուսակ 7. Սեռական ոտնձգության դեպքերը կարգավորող օղակներն ըստ հարցվողների

<i>Ո՞վ պետք է կարգավորի նման հարցերը ուսումնական հաստատություններում</i>	<i>Պատասխանների հաճախականություն</i>
<i>Դպրոցի տնօրենություն/ տնօրեն/ փոխտնօրեն</i>	<i>144</i>
<i>Հոգեբան</i>	<i>55</i>
<i>Հատուկ պատասխանատու մասնագետ</i>	<i>39</i>
<i>Դեկան/ դեկանատ/ փոխդեկան</i>	<i>38</i>
<i>Ուսուցչական/դասախոսական անձնակազմ</i>	<i>45</i>
<i>Ռեկտոր/ ռեկտորատ/ պրոռեկտոր</i>	<i>33</i>
<i>Բոլորը</i>	<i>30</i>
<i>Ղեկավար/ադմինիստրատիվ անձնակազմ</i>	<i>36</i>
<i>Ուստիկան/ուստիկանություն</i>	<i>30</i>
<i>Հատուկ բաժին/ մարմին/ հանձնախումբ</i>	<i>21</i>
<i>Զգիտեմ</i>	<i>20</i>
<i>Դասղեկ/կուրսղեկ</i>	<i>22</i>
<i>Անվտանգության բաժին</i>	<i>16</i>
<i>ԿԳՄՄՆ</i>	<i>14</i>
<i>Ամբողջ անձնակազմը</i>	<i>9</i>
<i>Մոցիալական աշխատող</i>	<i>9</i>
<i>Ուսխորհուրդ/ուսանողներ/ աշակերտներ</i>	<i>11</i>
<i>Այլ</i>	<i>5</i>
<i>Հատուկ/սոցմանկավարժ</i>	<i>4</i>
<i>Պատասխանատու պետական մարմիններ/պետություն</i>	<i>4</i>
<i>Ընտանիք/ ծնողներ</i>	<i>4</i>
<i>Ամբիոնի վարիչ/ամբիոն</i>	<i>4</i>
<i>Ոչ ոք</i>	<i>3</i>
<i>Իրավաբան</i>	<i>2</i>
<i>Բժշկական անձնակազմ</i>	<i>2</i>

Ստորև ներայացված Գծապատկերներում (տե՛ս Գծապատկեր 10 և 11) պատկերված են դեպքի կարգավորման աստիճանական մոտեցման պատկերացումները դպրոցներում և համալսարաններում:


Գծապատկեր 10. Դպրոցում սեռական ոտնձգության դեպքերի համակարգման սխեմա ըստ հարցվողների

Դպրոցում



Բուհերում

Գծապատկեր 11. Բուհերում սեռական ոտնձգության դեպքի համակարգման սխեմա ըստ հարցվողների



Հաշվի առնելով վերոնշյալ արդյունքները՝ ներկայում ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգությունների կանխարգելման, արձագանքման և դեպքերի համակարգման առումով հստակ ուրագծվում են այն բացերը, որոնք պետք է լրացնել, որպեսզի առնվազն դեպքերի կանխարգելման և համակարգման մեխանիզմները դառնան առավել հստակ և իրավաչափ: Առկա մեխանիզմների վերաբերյալ համապատասխան լուծումների և բարելավման ռազմավարությունների մշակման պարագայում պետք է անխտիր հաշվի առնել այն մոտեցումներն ու կարծիքները, որոնք արտահայտել են հարցվածներն իրենց ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության/բռնության դեպքերի կանխարգելման նպատակով իրականացվելիք միջոցառումների կամ գործողությունների վերաբերյալ:

Այսպիսով՝ հարցման մասնակիցներն արտահայտել են իրենց կարծիքը, թե ինչ կարող է անել իրենց ուսումնական հաստատությունը նման դեպքերի կանխարգելման նպատակով: Ինչպես և կանխատեսելի էր, նրանց ճնշող մեծամասնությունը նշել է, որ հարկավոր է իրականացնել լայնածավալ **իրազեկում (նշվել է 215 անգամ)** թե՛ դպրոցներում, թե՛ համալսարաններում, որպեսզի ուսանողները և աշխատակազմը տեղեկացված լինեն երևույթի և դրա դրսևորման ձևերի, ուսումնական հաստատությունում գործող մեխանիզմների և կանոնակարգի, ինչպես նաև պատժամիջոցների մասին: Առաջարկված լուծումներից ըստ հանդիպման հաճախության երկրորդ տեղում է հաստատությունում **անվտանգության ապահովումը (նշվել է 26 անգամ)**, ինչը ներառում է տեսախցիկներով վերահսկողություն, անվտանգության աշխատակիցների ավելացում ու զգոնություն, ինչպես նաև ապահով միջավայրի ստեղծում: Ըստ տարածվածության երրորդ տեղում **ըստ օրենքի պատժամիջոցների կիրառումն է (նշվել է 21 անգամ)**, ինչը ենթադրում է խիստ նկատողություններ և աշխատանքից ազատում, ընդհուպ իրավապահ մարմիններին դիմելը: Դեպքերի կանխարգելման նպատակով առաջ է քաշվել տեղի ունեցած **ոտնձգությունների մասին բարձրաձայնելու (նշվել է 16 անգամ)** և **հետևողական լինելու (նշվել է 16 անգամ)** կարևորությունը, ինչը

թույլ կտա ուսումնառության և աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց բարձր զգոնություն և անպատժելիության երևույթի բացառում: Այլ տարբերակների մեջ նշվել են **հոգեբանի պարտադիր հաստիքի ներդրումը բոլոր ուսումնական հաստատություններում, համապատասխան համակարգող և վերահսկող մարմինների ստեղծումը ուսումնական հաստատություններում, կադրերի ճիշտ ու բարեխիղճ ընտրությունը, ուսումնական հաստատության համար թեժ գծի ներդրումը և ավելի բարձր մակարդակում օրենսդրական փոփոխությունների ապահովումը:**

Հարցման մասնակիցների կողմից **իրազեկումը** որպես կարևոր միջոց նշելը պատահական և զարմանալի չէ և համահունչ է ևսև այն հանգամանքին, որ հարցվածների մոտ **երեք քառորդը (72%)** նշել է, որ համաձայն է այն պնդմանը, որ **իրազեկումն ու կրթությունը կարող են օգնել կանխելու սեռական բռնությունը:** Միևնույն ժամանակ այն հարցին, թե արդյոք իրենց ուսումնական հաստատություններում իրականացվում են իրազեկման միջոցառումներ, մասնակիցների ճնշող մեծամասնությունը նշել է, որ կա՛մ նման միջոցառումներ **չեն իրականացվում (63%),** կա՛մ իրենք դրա մասին **տեղյակ չեն (28%):** Միայն հարցվածների **9%-ն է** նշել, որ իրենց ուսումնական հաստատություններում **իրականացվում են իրազեկման միջոցառումներ:** Իրազեկման պակասի մասին է վկայում նաև այն փաստը, որ հարցվածների ընդամենը **11%-ն է տեղյակ** իրենց համայնքում սեռական բռնության ենթարկված անձանց համար **առկա և հասանելի աջակցման** կենտրոնների և միջոցների մասին: Վերջիններս հասարակական կազմակերպությունների շարքում նշել են «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը», «Կանանց ռեսուրսային կենտրոնը», «Կանանց աջակցման կենտրոնը», «Կանանց իրավունքների կենտրոնը», «Կանանց իրավունքների տունը», «Փոքրիկ իշխան կենտրոնը», գործող թեժ գծերը, իսկ պետական մարմինների շարքում՝ ոստիկանությունը և մարզային սոցիալական ծառայությունները:

Հարցվածների կեսից ավելին (57%) նշել է, որ երբևէ չի մասնակցել կամ ինքը երբևէ չի իրականացրել սեռական բռնության վերաբերյալ իրազեկման միջոցառումներ, ինչին հետևել է մասնակիցների **98%-ի դրական արձագանքը** սեռական բռնության կանխարգելման վերաբերյալ դասընթացների ավելի հասանելի լինելու անհրաժեշտությանը: Հատկանշական է, որ դասընթացների անցկացման վայրի ընտրության ժամանակ առավել շատ ձայներ է հավաքել դպրոցը (**նշվել է 340 անգամ**), որին հաջորդել է հենց կոնկրետ իրենց ուսումնառության հաստատությունը (**նշվել է 282 անգամ**), ապա՝ որևէ ՀԿ-ի գրասենյակը (**նշվել է 234 անգամ**) և առցանց հարթակը (**նշվել է 206 անգամ**)՝ մասնակցության գաղտնիությունը պահելու համար:

Այսպիսով՝ հարցման արդյունքները վկայում են, որ ուսումնական հաստատությաններում սեռական ռոնձգության երևույթն անհերքելի փաստ է, որը միևնույն ժամանակ չունի հստակ մշակված կանխարգելման և արձագանքման մեխանիզմներ: Ոչ միայն հաստատվեցին կանխարգելման կարևոր մեխանիզմներից մեկի իրազեկվածության բարձրացման կարևորությունն ու անհրաժեշտությունը, այլև բացահայտվեց դրա բացակայությունը ուսումնական հաստատություններում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԵՐ

Հիմնվելով հարցման արդյունքների վրա՝ հետազոտական թիմը առաջ է քաշել մի շարք առաջարկություններ, որոնց իրականացման պարագայում հնարավոր է բարելավել ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգությունների կանխարգելման և արձագանքման ընթացակարգերը:

- 1.** Ներդնել ուսումնական բոլոր տիպի հաստատություններում «Սեռական բռնության կանխարգելման և դեպքերի արձագանքման քաղաքականություն», որտեղ ներկայացված կլինեն հետևյալ քայլերը՝
 - 1.1. կանխարգելում՝ հստակեցնելով ուսումնառուների իրազեկման պատասխանատուներին և իրազեկման գործընթացի կազմակերպման նկարագիրը,
 - 1.2. ընթացակարգ՝ մանրամասնելով սեռական բռնության բախվող կամ ենթարկվող անձի կողմից ակնկալվող գործողություններն ու անելիքը իր կամ իր ծանոթի հետ կատարվածի դեպքի կապակցությամբ,
 - 1.3. պատասխանատվությունների ցանկ՝ մանրամասնելով, թե կոնկրետ ուսումնական հաստատություններն ինչ պատասխանատվություն ու պարտականություններ ունեն դեպքը հասկանալու և դրա վերաբերյալ քայլեր ձեռնարկելու առումով:
- 2.** Վերոնշյալ գործողությունների իրականացման համար տվյալ ուսումնական հաստատության անձնակազմի կողմից անհրաժեշտ գիտելիքի և հմտությունների ոչ բավարար լինելու պարագայում գտնել գործընկեր կազմակերպություն, որն ունի նման մասնագիտացում և փորձառություն, և սահմանել համագործակցության միջոցները:
- 3.** Հստակեցնել իրազեկման գործողությունների պարբերականությունը, որպեսզի յուրաքանչյուր նոր դասախոս/ուսուցիչ և ուսումնառու ստանա անհրաժեշտ տեղեկությունն ու գիտելիքը:
- 4.** Իրականացնել կառույցից դուրս կառույցի/ կազմակերպության մշտադիտարկման այցեր՝ սահմանելով դրանց հստակ հաճախականությունը:
- 5.** Իրականացնել ուսումնական հաստատությունների պատասխանատուների հատուկ վերապատրաստումներ՝ կառույցում ունենալու անձինք, որոնք ձեռք են բերել բավարար գիտելիք և հմտություն՝ ճանաչելու և բացահայտելու սեռական բռնության դեպքերը, ունեն զգայուն մոտեցում սեռական բռնության ենթարկված անձի հետ առաջնային զրույցի անցկացման համար:
- 6.** Առաջին կետով առաջարկվող «Սեռական բռնության կանխարգելման և դեպքերի արձագանքման քաղաքականության» ներդրումից հետո սահմանել հստակ ընթացակարգ, համաձայն որի՝ ուսումնական հաստատություն ընդունվող յուրաքանչյուր աշխատող պետք է ծանոթանա և ստորագրի այն:
- 7.** Ուսումնական առաջնային օղակներում (դպրոց) սահմանել երեխայի ծնողի և իրավապահ համակարգի ներգրավման ընթացակարգեր:
- 8.** Ուսումնական առաջնային օղակներում (դպրոց) իրականացնել մշտադիտարկման գնահատում՝ պարզելու հաստատություններում հոգեբանի հաստիքի առկայությունը, մասնագետի աշխատանքի որակը և արդյունքները: Մշտադիտարկման գնահատման արդյունքում հոգեբանի ինստիտուտի ոչ լիարժեք աշխատանքի բացահայտման պարագայում մշակել դպրոցներում հոգեբանի ինստիտուտի ամրապնդման և բարելավման քաղաքականություն:

ԵՐԵՎԱՆ 2023